

Մեծամեծք սոցունց եւ քէտխօտայք եւ մուսէլ-
լիմք եւ նախարարք, զորս եւ յանուանէ չկարացաք
ունել աստ:

Եւ եղեւ պարտութիւն նոցա այսպէս: Մուրթա-
զան քանզի պարտեցաւ եւ եղեւ ամօթալից ի մէջ
իշխանութեան արքայիս, եւ գրէ վէզիրն հանապազ
նմա բանս պարսաւանաց եւ եւս արիացուցանողական
բանս՝ արքայի գրիւ յար եւ յար. եւ խորհեցաւ խո-
րամանկութեամբ հանել զքէն, նաեւ թէ կարիցէ յաղ-
թել: Գրէ առ Հասանն գիր խոնարհութեան հնազան-
դօրէն ծառայապէս՝ մեծացուցեալ զնայ յերկար բա-
նիւք, ասելով. Որովհետեւ ես ակամարս ոչ ծանեայ
զվեհանձնութեան քո քաջութիւն անհուն զօրութեան
եւ պարտեայ ըստ իմ արժանւոյ, եւ դու ըստ քեզէն
բնածին հեզ բարուցդ գթալով ներեսցես, աղաչե՛մ,
եւ թէ ստրուկ եղբայր անգամ ոչ համարեսցիս, ըն-
կա՛ւ քեզ ծառայ: Եւ երթեալ մտանէ ի Հալապ եւ
հանէ յոտին զպատուականս քաղաքին թէ ի մէջ մեր
մտեալ խաղաղացուցէ՛ք զմեզ: Եւ ոչ յայտնէ ամենե-
ցունց զխորամանկութիւն, այլ որոց եւ հաւատայ
զանձն՝ զոր գիտէ: Եւ առաքեն զգիր առ Հասանն
ի Քիլիս Դ պէկլէրպէկիւ, եւ նա զիջեալ հաւանմամբ
բանից և երգմանց նոցա, ելեալ երթայ ի դաշտն մերձ
Բերիոյ, և յորժամ դայ անդ, ասէ՝ Ե՛կ և երթիցուք.
յայնժամ և ի քաղաքացոց ելեալ ուլամայք և մեծա-
մեծք եւ շէխք եւ նշանաւոր արք եւ Դ պէկլէրպէկի
որ կայր ի Քիլիս եւ գրով գայ առ տեղին մերձ Բե-
րիոյ, եւ յորժամ գան՝ երթան առ նա կրկին եւ ան-
կանին յոտս նորա և ասեն. Ո՛վ տէր և իշխան մեծ,
ամօթ մեծ է այս ի մէջ մեր եւ ի տէրութիւնս ար-
քայիս մերոյ, եւ թէ լուիցեն զայս այլոց տէրու-
թիւնք՝ զի՞ ասեն մեզ, եւ ամենայն լեզուք որք ընդ
հովանեաւ մեր կան բնակեալ. եւ ահա ունիմք թըշ-